ԱՌԱՋԱԲԱՆ

Սանահինը միջնադարյան Հայաստանի նշանավոր վանքերից մեկն է: Նա հիմնարկվել է 10-րդ դարում և մեր ժողովրդի պատմության համընթաց, երբեմն հասնելով ծաղկուն վիճակի և երբեմն էլ քայքայման աստիճանի, իր գոյությունը պահպանել է մինչև 20-րդ դարը: Վանքի շենքերն այսօր էլ կանգուն են և մեր պետության կողմից խնամքով պահպանվում և նորոգվում են, իբրև հայկական հին ճարտարապետության հուշարձաններ:

Իր հազարամյա գոյության ընթացքում Սանահնի վանքը նշանավոր է եղել իբրև ֆեոդալական Հայաստանի մտքի կենտրոններից մեկը: Այնտեղ գրվել են բազմաթիվ ձեռագիր գրքեր, նա ունեցել է իր գիտական վարդապետները, որոնք հեղինակել են մի շարք կրոնական և աշխարհիկ բնույթի գրքեր, վանքն ունեցել է իր բարձրագույն դպրոցը, որտեղ ուսում են ստացել բազմաթիվ միջնադարյան գործիչներ: Սանահնի մատենադարանում պահվել են հին ձեռագիր գրքեր և միջնադարյան Հայաստանի արվեստի թանկարժեք առարկաներ, մեծ մասամբ արծաթագործության և ասեղնագործության նմուշներ:

Սանահնի վանքն ունեցել է ընդարձակ կալվածներ, խոշոր տնտեսություն և հանդիսացել է հոգևոր խոշոր կալվածատիրության բնորոշ օրինակ, որը երևում է նաև վանքի վիմական արձանագրություններից:

Վանքի բազմաթիվ շենքերը մեծ արժեք են ներկայացնում միջնադարյան ճարտարապետության պատմության համար, իսկ շենքերի պատերին և շրջապատում կանգնեցրած խաչքարերի ու տապանաքարերի վրա գրված մոտ հարյուր ութսուն մեծ և փոքր արձանագրությունները կարևոր տեղեկություններ են պարունակում իրենց ժամանակի պատմական իրադարձությունների և կուլտուրայի մասին: Այդ է պատճառը, որ վաղուց ի վեր ուշադրություն է դարձվել վանքի վիմական արձանագրությունների վրա, և արտագրվել ու հրատարակվել է նրանց մի մասը:

* * *

Սանահնի արձանագրությունները մենք հավաքել ենք մաս առ մաս, 1935—1938 թվականներին մեր կարճատև գիտական ուղևորությունների ընթացքում, որոնք կապված էին պատմական հուշարձանների պահպանության և մերձակա վայրերում պատահականորեն բացված հին դամբարանների և այլ